# ՀՀ ՕՐԵՆՔԸ «ԳՆՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Գլխավոր տեղեկություն**

| | |
|---|---|
| Համար | ՀՕ-304-Ն |
| Տիպ | Օրենք |
| Ակտի տիպ | Հիմնական ակտ (20.10.2025-մինչ օրս) |
| Կարգավիճակ | Գործում է |
| Սկզբնաղբյուր | Միասնական կայք 2025.09.29-2025.10.12<br>Պաշտոնական հրապարակման օրը 10.10.2025 |
| Ընդունող մարմին | ՀՀ Ազգային ժողով |
| Ընդունման ամսաթիվ | 11.09.2025 |
| Ստորագրող մարմին | ՀՀ Նախագահ |
| Ստորագրման ամսաթիվ | 09.10.2025 |
| Ուժի մեջ մտնելու ամսաթիվ | 20.10.2025 |

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

# Օ Ր Ե Ն Ք Ը

**Ընդունված է 2025 թվականի սեպտեմբերի 11-ին**

## «ԳՆՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

***Հոդված 1.*** «Գնումների մասին» 2016 թվականի դեկտեմբերի 16-ի ՀՕ-21-Ն օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 55.1-ին հոդվածով.

«***Հոդված 55.1.*** **Հանրային (պետական) բուհի կամ հանրային (պետական) գիտական կազմակերպության գնումների կատարման առանձնահատկությունները**

1. Հանրային (պետական) բուհի կամ հանրային (պետական) գիտական կազմակերպության գնումների կատարման դեպքում՝

1) սույն օրենքով Հայաստանի Հանրապետության կառավարությանը վերապահված լիազորություններն իրականացնում է բուհի կամ գիտական կազմակերպության հոգաբարձուների խորհուրդը.

2) պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի գործողությունների (անգործության) և որոշումների բողոքարկումն իրականացվում է սույն օրենքի 6-րդ բաժնով սահմանված կարգով:»:

***Հոդված 2.***

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

2. Սույն օրենքի պահանջները չեն տարածվում մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելն սկսված և չավարտված գնման գործընթացների վրա:

***Հանրապետության նախագահի*** **Վ. Խաչատուրյան**

2025 թ. հոկտեմբերի 9
Երևան
ՀՕ-304-Ն

**Պաշտոնական հրապարակման օրը՝ 10 հոկտեմբերի 2025 թվական:**

**Փոփոխման պատմություն**

| Փոփոխող ակտ | Համապատասխան ինկորպորացիան |
| --- | --- |

**Փոփոխված ակտ**

| Փոփոխող ակտ | Համապատասխան ինկորպորացիան |
| --- | --- |